ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 216 – Ա 14 սեպտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2018 թվականի հունվարի 26-ի N 20-Ա որոշման հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական շապտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 12.2.1 կետը

որոշում եմ՝

1. 2018 թվականի սեպտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացում փլուզված շենքում» թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար, փ/ծ փոխգնդապետ Գարեգին Հակոբյանին:

3. Հաստատել՝

1) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նմանակողների խմբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի:

4. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունը.

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնից 1 խումբ,

3) «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից աղետների բժշկության 1 խումբ.

4) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գավառի ԳԳՄ-ից վթարավերականգնողական 1 խումբ.

5) «Հայկական Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի Գավառի էլցանցի վթարավերականգնողական 1 խումբ:

5. Ուսումնավարժության ղեկավար, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար, փ/ծ փոխգնդապետ Գարեգին Հակոբյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի.

2) կազմակերպել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

3) ուսումնավարժության նախապատրաստման ընթացքում տեղական լրատվամիջոցներով բնակչությանը տեղեկացնել ուսումնավարժության բնույթի մասին.

4) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2018 թվականի սեպտեմբերի 17-ին.

5) ուսումնավարժությունը անցկացնելուց հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան իրավիճակներում գործելու պլանները.

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով.

3) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին.

5) գործնական միջոցառումներ իրականացնելիս խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անուշավան Ղազարյանին:

9 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պա[illegible]

ՄԱՐԶՊԵՏ [illegible]ՅԱՆ

[illegible] Գավառ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«14» սեպտեմբեր 2018թ.
N 216- Ա որոշման

ԿԱԶՄ
ՅՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

ՀՀ	Պաշտոնը ղեկավարման շտաբում	փ/ծ կոչում անուն, ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	փ/ծ կապիտան Ա. Պետրոսյան	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ
2	ուսումնավարժության ղեկավարման շտաբի անդամ փաստաթղթերի մշակման գծով	փ/ծ մայոր Վ. Գորոյան	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
3	ուսումնավարժության ղեկավարման շտաբի անդամ կապի կազմակերպման գծով	փ/ծ լեյտենանտ Լ. Պիպոյան	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
Գործնական միջոցառումների կազմակերպման խումբ			
4	խմբի պետ	փ/ծ կապիտան Ա. Սիմոնյան	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ
5	խմբի անդամ	փ/ծ ավագ մայոր Ա. Բարսեղյան	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ թիվ 31 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԱՆ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«14» սեպտեմբեր 2018թ.
N 216- Ա որոշման

ԿԱԶՄ
ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՄԱՆԱԿՈՂՆԵՐԻ ԽՄԲԻ

ՀՀ	Պաշտոնը ուսումնավարժությունում	փ/ծ կոչում անուն, ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	խմբի պետ	փ/ծ կապիտան Հովսեփյան Խաչիկ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի խմբի պետ
2	խմբի անդամ	փ/ծ ավագ Աղեկյան Արշակ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի օղակի հրամանատար
3	խմբի անդամ	փ/ծ ավագ սերժանտ Մարտիրոսյան Խաչիկ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ թիվ Գավառի 31 ՀՓՋ-ի ավագ հրշեջ
4	խմբի անդամ	փ/ծ սերժանտ Հովեյան Խաչիկ	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի պարամեդիկ
5	խմբի անդամ	փ/ծ սերժանտ Ներսիսյան Միեր	ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի վարորդ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ... ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«14» սեպտեմբեր 2018թ.
N 216 – Ա որոշման

ՊԼԱՆ

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման

ՈՒսումնավարժության թեման՝ - «Պայթյունի հետևանքով կիսաքանդ բազմաբնակարան շենքում որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում»:

ՈՒսումնավարժության նպատակները՝

1. Կատարելագործել արձագանքող ուժերի գործնական հմտությունները փլուզված շենքում որոնողափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կատարելիս:

2 Արձագանքող ուժերի փոխգործողությունների կատարելագործում:

ՈՒսումնավարժության մասնակիցների կազմը՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունը.
2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնից 1 խումբ,
3) « Գավառի ԲԿ » ՓԲԸ-ից աղետների բժշկության 1 խումբ.
4) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գավառի տարածքային տեղամասի վթարավերականգնողական 1 խումբ.
5) «Հայկական Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ Գավառի տեղամասի վթարավերականգնողական 1 խումբ.

Անցկացման ժամկետը՝ –2018թ սեպտեմբերի 18-ին, ժամը 11^{00}-12^{00}

Անցկացման վայրը՝ – ք. Գավառ, Սայադյան փ, համալիրի շենք: Գործնական միջոցառումները անցկացվելու են 7 տեղամասերում:

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մտահղացում՝ 18.08.2018թ.-ին ժամը 11^{00} – ին գազի պայթյուն է տեղի ունեցել Գավառ քաղաքի Սայադյան փ, համալիրի շենքում, որի հետևանքով շենքը կրել է վնասներ, կան մասնակի փլուզումներ, տուժածներ, առաջացել է հրդեհ:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

հ/հ	Ժամանակը (աստղաբաշխական)	Միջոցառման անվանումը	ՈՒսումնավարժության ղեկավարի գործողությունները	ՈՒսուցանվողների գործողությունները
1	11^{00}-11^{02}	Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի անձնակազմի ազդարարում և հավաք, Գավառն քաղաքի արձագանքող ծառայությունների ահազանգում:	Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ին հաղորդվում է ահազանգ՝ Գավառ քաղաքի գազի պայթյունի հետևանքով վնասված շենքի վերաբերյալ:	Ստանալով ահազանգ վթարի վերաբերյալ, դեպքի վայր է ուղարկում Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի հերթափոխից երկու մարտական հաշվարկ, իրականացնում է ջոկատի անձնակազմի հավաք: Տեղեկատվությունը փոխանցում է Գավառ քաղաքի արձագանքող ծառայություններին:
2	11^{02}- 11^{09}	Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի և ք. Գավառի հերթապահ ծառայությունների արձագանքող ուժերի ժամանում դեպքի վայր:	Ներկայացնում է ստեղծված իրավիճակը:	Գեղարքունիքի ՄՓՎԳավառի թիվ 31 ՀՓՋ-ից 1 մարտական հաշվարկ և ջոկատի՝ տագնապով հավաքված անձնակազմից 10 ծառայող՝ օժանդակ ավտոմեքենայով, Գավառի շտապ օգնության և աղետների բժշկության 1 խումբ, ոստիկանության Գավառի բաժնի 1 խումբ, Գավառի գազամատակարարման, էլեկտրամատակարարման, վթարավերականգնողական մեկական խմբեր ժամանում են դեպքի վայր և տեխնիկաները տեղակայում են աշխատանքների կազմակերպման համար տեղերում:
3	11^{09}-11^{19}	Հետախուզության իրականացում:	Տալիս է կարգադրություն՝ հետախուզություն անցկացնելու վերաբերյալ:	Դեպքի վայրում Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 ՀՓՋ-ից 3 ծառայող իրականացնում են հետախուզություն և զեկուցում արդյունքների մասին: Հայտնաբերվում են 4 տուժածներ: Գավառի վթարային ծառայությունների խմբերը իրականացնում են հատուկ հետախուզություն:
4	11^{09}-11^{12}	Շարժական կառավարման կետի ծավալում:	Տալիս է կարգադրություն՝ շարժական կառավարման կետ ծավալելու վերաբերյալ:	Ծավալում են շարժական կառավարման կետ «ՈՒԱՋ 3151» մակնիշի ավտոմեքենայում, որտեղ անընդհատ ստացվում են տեղեկատվություններ իրավիճակի և իրականացվող միջոցառումների վերաբերյալ, որոշում են ուժերի կենտրոնացման հիմնական ուղղությունը, ուժերի և միջոցների բաշխումը ըստ աշխատանքային տեղամասերի:
5	11^{12}-11^{15}	Հրդեհաշիջման իրականացում:	Հետևում է աշխատանքների իրականացման ընթացքին:	Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 31 հրշեջ փրկարարական ջոկատի անձնակազմը **2-րդ տեղամասում** կատարում են հրդեհաշիջում՝ բացելով ճանապարհ տուժածներին մոտենալու համար, ձեռնարկում են միջոցներ՝ անվտանգ պայմաններում

				առաջին օգնություն ցուցաբերելու համար:
6	11^{12}-11^{45}	Փրկարարական աշխատանքների իրականացում	Տալիս է կարգադրություն որոնողափրկարարական, հասարակական կարգի պահպանման, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման և առաջին բուժօգնության ցուցաբերման վերաբերյալ:	Գեղարքունիքի ՄՓՎ գավառի թիվ 31 հրշեջ փրկարարական ջոկատի անձնակազմը՝ 1) **<u>1-ին տեղամասում</u>** հայտնաբերված տուժածին հիդրավլիկ և մեխանիկական ամբարձիչների կիրառմամբ պանելի տակից դուրս են բերում անվտանգ վայր և հանձնում բուժանձնակազմին, 2) **<u>3-րդ տեղամասում</u>** փլված կիսանկուղային հարկում արգելափակված տուժածին դուրս են բերում և հանձնում բուժանձնակազմին: 3) **<u>4րդ տեղամասում</u>** 2-րդ հարկում հայտնաբերված 2 տուժածներին պարանների միջոցով իջեցնում և հանձնում են բուժանձնակազմին: Նշված բոլոր տեղամասերում ձեռնարկում են միջոցներ անվտանգ պայմաններում առաջին օգնություն ցուցաբերելու համար, աջակցում են բուժաշխատողների կողմից այդ աշխատանքների կատարմանը, կատարում են պատգարակի կիրառմամբ տուժածների տեղափոխությունը:
7	11^{15}-11^{45}	Բուժօգնության ցուցաբերում		Գավառի աղետների բժշկության խումբը՝ 1) **<u>5-րդ տեղամասում</u>** ծավալում է վիրավորների տեսակավորման կետ, 2) **<u>1-ին, 3-րդ, 4րդ տեղամասերում</u>** ընդհանուր թվով 4 տուժածներին ցուցաբերում են առաջին բուժօգնություն տեղափոխում են տեսակավորման կետ, որտեղից էլ տեղափոխում են մասնագիտացված բուժհաստատություններ:
8	11^{09}-11^{45}	Հասարակական կարգի պահպանություն		Ոստիկանության Գավառի բաժնի խումբը իրականացնում է երթևեկության սահմանափակում և հասարակական կարգի պահպանություն
9	11^{19}-11^{32}	Գազամատակարարման վթարավերականգնողական աշխատանքներ		**<u>6-րդ տեղամաս</u>** «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գավառի տեղամասի վթարավերականգնողական խումբը իրականացնում է գազամատակարարման համակարգի վթարի վերացման աշխատանքներ:

10	11^{19}-11^{30}	Էներգամատակարարման վթարավերականգնողական աշխատանքներ		**7-րդ տեղամաս** «ՀԷՑ» ՓԲԸ Գավառի տեղամասի վթարավերականգնողական խումբը իրականացնում է էներգամատակարարման համակարգի վթարի վերացման աշխատանքներ:
11	11^{45}- 12^{00}	Ուսումնավարժության ավարտ և արդյունքների ամփոփում	Ուսումնավարժության ղեկավարը գնահատում է ուսուցանվողների գործողությունները, նշելով թերությունները, տալիս հանձնարարականներ՝ դրանց վերացման ուղղությամբ և հայտարարում է ուսումնավարժության ավարտ:	Մասնակցում են ուսումնավարժության ամփոփմանը:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՎԱՀԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«14» սեպտեմբեր 2018թ.
N 216- Ա որոշման

ՍԽԵՄԱ
ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ



Պայմանական նշաններ

- հրդեհի օջախ
- Շարժական կառավարման կետ
- Ուժերի շարժման երթուղի
- S Տեղամաս
- Փլվածք

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ